ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՍՄԱ-ԳՀԾՁԲ-2025/15» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Կապան

02 դեկտեմբեր 2025թ
ժամը՝ 16:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Բալյան Կարեն - ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական

հանձնաժողովի անդամներ՝

Հովհաննիսյան Մասիս - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ

Մովսիսյան Նելլի - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Արզումանյան Արթուր - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

հանձնաժողովի քարտուղար՝ Գրիգորյան Սահականուշ (գնումների համակարգող)

1. Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հայտարարության և հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 16:30-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

2. ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀՍՄԱ-ԳՀԾՁԲ-2025/15» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Հ/Հ	Մասնակցի անվանում	ՀՎՀՀ	Հասցե	Էլ. փոստի հասցե
1	«ՄԱՐՏԵՎ»ՍՊԸ	09427898	Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 2 բն. 20	martevltd@gmail.com

3. Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացի աշխատակազմում ընդգրկված մասնագետի որակավորումը հավաստող փաստաթուղթը / դիպլոմ, հավաստագիր/:

4. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Մասնակից	Նախահաշվային գին	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	«Լեռնաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	«ՄԱՐՏԵՎ»ՍՊԸ	**1176000**	885000	177000	**1062000**

5. Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին

հիմնավորումներ չեն ներկայացվել հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

6. Հրավերի վերաբերյալ հարցեր և պարզաբանումներ չեն եղել:

7. Մասնակցին հայտաբերված անհամապատասխանությունների շտկման հնարավորություն տալու նպատակով, գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի բացման և գնահատման նիստը կասեցնել 1 (մեկ) աշխատանքային օրով և այդ մասին համակարգի միջոցով ծանուցել մասնակցին՝ շտկելու անհամապատասխանությունները՝ առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանման, ապրանքային նշանի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության տրամարում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 , դեմ՝0

Հայտերի բացման և գնահատման նիստը շարունակվել է դեկտեմբերի 04-ին ժամը 17:00-ին ք. Կապան, Գ. Նժդեհի 1 հասցեում, որին մասնակցում էին՝

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Բալյան Կարեն - ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական

հանձնաժողովի անդամներ՝

Հովհաննիսյան Մասիս - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ

Մովսիսյան Նելլի - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Արզումանյան Արթուր - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

հանձնաժողովի քարտուղար՝ Գրիգորյան Սահականուշ (գնումների համակարգող)

8. «ՄԱՐՏԵՎ»ՍՊԸ-ն սահմանված ժամկետում համակարգի միջոցով, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել պահանջված տեղեկատվությունը:

9. Հայտը գնահատվել է «ՀՀՍՄԱ-ԳՀԾՁԲ-2025/15» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Մասնակցի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին և գնահատվել է «Բավարար»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

10. Գնահատող հանձնաժողովը որոշեց հիմք ընդունելով գնահատման արդյուքները ընտրված մասնակից ճանաչել **«ՄԱՐՏԵՎ»ՍՊԸ**-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

11. Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և անգործության ժամկետ չսահմանել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

Հանձնաժողովի նախագահ՝		Կարեն Բալյան
Հանձնաժողովի անդամներ՝		Մասիս Հովհաննիսյան
		Արթուր Արզումանյան
		Նելլի Մովսիսյան
հանձնաժողովի քարտուղար՝		Սահականուշ Գրիգորյան